ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱ Պատմության ինստիտուտ

ՇՈՒՇԻԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ (1919 Թ. ՀՈՒՆԻՍ ԵՎ 1920 Թ. ՄԱՐՏ)

«Հայոց արևելից կողմանց»՝ Արցախ աշխարհի, բազմադարյա պատմության առավել ծանր ու դրամատիկ իրադարձություններով լի տարիները 1918-1920 թվականներն էին: Հենց այդ տարիներին էր, որ Լեռնային Ղարաբաղը դարձավ «վիճելի տարածք»:

1918 թ. մայիսի վերջերին Անդրկովկասի երեք հանրապետությունների հռչակումից հետո Ադրբեջանի նորաթուխ մուսավաթական կառավարությունը հավակնում էր բռնազավթել պատմական Հայաստանի մի շարք տարածքներ, այդ թվում Լեռնային Ղարաբաղը: Ելնելով իրենց ռազմավարական նպատակներից Ադրբեջանի նվաճողական ծրագրերին բացահայտ կերպով օգնում էին Օսմանյան Թուրքիան, որոշ ժամանակ անց՝ Անգլիան, իսկ ավելի ուշ՝ Խորհրդային Ռուսաստանը, ինչը մեծապես բարդ ու դժվարին վիճակ էր ստեղծում Հայաստանի համար:

1918 թ. աշնանը թուրքական բանակի հեռանալուց հետո երկրամասում հաստատվեց անգլիացիների գերակայությունը: Բրիտանական զինվորական հրամանատարության Անդրկովկաս մուտք գործելուց հետո արցախահայության համար սկսվեցին առավել դառը ժամանակներ: Անդրկովկասում խաղաղություն հաստատելու ձգտման քողի տակ երկրամասում Անգլիան աշխարհաքաղաքական շահերը ապահովելու խնդիր ուներ: Մի կողմից՝ Բաքվի «սև ոսկու» շլացնող ցոլքը, մյուս կողմից՝ Ադրբեջանին որպես պատվար ընդդեմ Ռուսաստանին օգտագործելու հավակնությունը՝ անգլիացիներին դարձրեցին ադրբեջանցիների դաշնակիցը: Բաքվում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնին, այնուհետև՝ նրան փոխարինած գնդապետ Շատելվորդին թև ու թիկունք դարձրած

Արևելյան Հայաստանի Շուշու, Զանգեզուրի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի գավառների գեներալ նահանգապետ հռչակված (Ադրբեջանի կառավարության 1919 թ. հունվարի 15-ի որոշումով) Խոսրով բեկ Սուլթանովը դիվանագիտական ճնշումներով, սպառնալիքներով, զինված ուժ գործադրելով ցանկանում էր արցախահայությունից կորզել Ադրբեջանին հպատակվելու համաձայնություն: Արցախցիների պատասխանը անփոփոխ էր ու հստակ. Ոչ՝ Ադրբեջանի իշխանությանը, միաժամանակ կողմ՝ խաղաղ բարեկամական հարաբերություն պահպանել հարևան թուրք ժողովրդի հետ:

Որքան ուժեղանում էին Ադրբեջանի իշխանությունների ճնշումներն ու բռնությունները, այնքան ավելի անկոտրում էր դառնում Արցախի հայության անկախ ու ազատ ապրելու և իր պատմությունն ինքնուրույն կերտելու կորովն ու կամքը: Չկարողանալով հաշտվել այս իրողության հետ, Ադրբեջանը շարունակում էր բոլոր միջոցներով սպառնալ գավառի հայության ֆիզիկական գոյությանը: Ադրբեջանի կառավարությունը մշտապես անուշադրության էր մատնում Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից պարբերաբար արված նախազգուշացումներն ու հորդորները՝ դադարեցնելու ոտնձգությունները Հայաստանի տարածքի մաս կազմող Լեռնային Ղարաբաղի նկատմամբ:

Ադրբեջանը փորձեց նախահարձակ լինել և արագորեն ընկճել Լեռնային Ղարաբաղում՝ հայության դիմադրությունը: Տեղյակ լինելով իրերի դրությանը Ղարաբաղում ԱՄՆ-ի զինվորական հրամանատարության ներկայացուցիչը վկայաբերում է, որ մայիս ամսից Ադրբեջանի կառավարության, ի դեմս Սուլթանովի գործունեությունը Ղարաբաղի հայերի նկատմամբ կտրուկ ագրեսիվ բնույթ ստացավ[1]: Բավական է նշել, որ ապրիլ-մայիս ամիսներին ադրբեջանական կանոնավոր զորամասերը և քրդական զինված խմբավորումներն ավելի քան 40 հարձակում կատարեցին հայկական բնակավայրերի վրա[2]: Ադրբեջանի կողմից հաճախակի դարձած զինված հարձակումները սպառնում էին Ղարաբաղի հայության ֆիզիկական գոյությանը:

[1] ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 64:
[2] Նույն տեղում, թ. 1:

Ստեղծված կացությունը օրինաչափորեն դնում էր տեղի հայությանը զինելու և ինքնապաշտպանության պատրաստվելու խնդիրը: Սակայն, մայոր Գիպոնի գլխավորությամբ անգլիական 5 հոգանոց ներկայացուցչության Շուշի ժամանելուց հետո (1918 թ. նոյեմբերի սկզբին), բնակչության զգոնությունը և ինքնապաշտպանության նախապատրաստման գործը չափազանց թուլացավ: Արցախի զինված կազմավորումների մի մասը ցրվեց: Ժողովուրդն իր հույսը դրեց ներկայացուցչության վրա: Այս իրողության և հնարավոր հետևանքների մասին խոսվում է Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահի Բաքվի Հայոց ազգային խորհրդին ուղղած նամակում. «Անգլիական ներկայացուցչության այստեղ ժամանելուց հետո մեր ամբողջ հույսը դնելով նրա վրա, դիմել ենք խաղաղ կյանքի, հաստատ համոզված լինելով, որ մեր կյանքի դեմ ոչ մի դավ չի նյութվելու»: Այնուհետև շարունակում է. «Ղարաբաղցիները ճշգրտությամբ կատարելով անգլիական ներկայացուցչության առաջարկությունը, Սուլթանովի գործողություններին հակակշիռ ոչինչ չձեռնարկեցին: Այդպես վարվելով չարաչար պիտի պատժվենք ու հիմնահատակ կործանվենք»[3], տագնապում է նամակագիրը: Ղարաբաղի հայության զանգվածային կոտորածի սկիզբը դրվեց 1919 թ. մայիսի 20-ից: Այդ օրը թուրքերը արգելեցին սննդամթերք անցկացնել հայկական շրջաններ: Սննդամթերք անցկացնելու յուրաքանչյուր փորձ ավարտվում էր ճանապարհին թուրքերի կողմից թալանով ու սպանություններով[4]: Ղարաբաղում իրադրությունը չափազանց լարվեց մեկ շաբաթ անց (մայիսի 27-ին)՝ քոչի սար բարձրանալու ժամանակ: Այդ օրը քոչվորները զինված խմբերի ուղեկցությամբ բռնեցին սար տանող ճանապարհը: Ժողովուրդը սպառնաց, որ եթե Ադրբեջանը շարունակի տնտեսական բոյկոտը, Ղարաբաղը ստիպված կլինի փակել քոչվորների ճանապարհը: Իր նպատակին հասնելու համար Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի դեմ հանեց լրացուցիչ կանոնավոր զորամասեր և հազարավոր անկանոն քուրդ ելուզակներ, ոչ պաշտոնական տվյալներով՝ շուրջ 10 հազար մարդ: Շուտով Լեռնային Ղարաբաղը հայտնվեց օղակի մեջ:

[3] Նույն տեղում, ֆ. 223, ց. 1, գ. 74, թ. 45:
[4] Нагорный Карабах в 1918-1923 гг., 1992, 264-265.

Սուլթանովը մտադիր էր առաջին հարվածը հասցնել Արցախի ազատագրության շարժման կենտրոն Շուշի քաղաքին:

Հունիսի սկզբներին գեներալ նահանգապետը կարգադրեց Շուշիի հայկական մասից գանձարանը և հեռագրատունը տեղափոխել քաղաքի թուրքական մաս: Դա լրջորեն անհանգստացրեց քաղաքի հայ բնակչությանը: Բանն այն է, որ այդ հիմնարկություններում աշխատողների մեծ մասը կանայք էին և նրանց համար դժվար էր թուրքական մասում աշխատելը: Բոլոր արժեթղթերի 95 %-ը (600000 ռուբլի) պատկանում էր հայերին, ինչպես և 3000000 ռուբլի խնայողական դրամարկղի գումարը[5]: Հայերը դիմեցին անգլիական ներկայացուցչությանը՝ այդ տեղափոխությունը արգելելու խնդրանքով: Ներկայացուցչությունը հավաստիացրեց, որ տեղափոխությունը չի կատարվի: Սակայն, հունիսի 2-ին Սուլթանովը, առանց որևէ նախազգուշացման, գանձատունը և հեռագրատունը քաղաքի հայկական թաղամասից փոխադրեց թուրքական թաղամաս: Հունիսի 2-ին նա Շուշիի թուրքական թաղամաս մտցրեց քրդական բանդա, թվով 3 հազար մարդ, ինչպես նաև 1500 զինված թաթարական քոչվորներ: Հունիսի 2-ին և 3-ին Շուշիի հայկական թաղամասից բոլոր թաթարները ծածուկ հեռացան թաթարական թաղամաս[6]: Հունիսի 3-ին թուրքական զորամասերը փակեցին Շուշիից դեպի Գորիս տանող խճուղին[7]: Համակողմանի նախապատրաստությունից հետո հունիսի 4-ին, առավոտյան ժամը 10-ին, Սուլթանովի հրամանով սկսվեց Շուշիի հայկական թաղամասի գնդակոծումը: Այդ օրը քաղաքի թուրքական թաղամաս աշխատանքի մեկնած 50 հայերից վերադառնում են 7-ը, իսկ մնացածներին քրդերը գազանաբար հոշոտում են[8]: Շուշիի հայկական թաղամասի գնդակոծումը տևեց շուրջ 16 ժամ: Մուսավաթ զինվորները և քրդական բանդան մտան քաղաքի հայկական թաղամաս և սոսկալի ավերածություններ կատարեցին[9]: Երկու կողմերից զոհվեց 20 մարդ: Այդ օրերին քաղաքի թուրքական մասում մորթվեց 40 հայ[10]: Սուլթանովի հրո-

[5] **Արամայիս,** Ղարաբաղի տագնապը, 1993, 26:
[6] ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 64:
[7] Նույն տեղում:
[8] «Ժողովուրդ», 22 հունիսի 1919 թ.:
[9] ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 64:
[10] «Պահակ», 14 հունիսի 1919 թ.:

սակախմբերն իրենց «բարձրության» վրա գտնվեցին Ղայբալիշեն գյուղը կործանելիս: Ղայբալիշենը գտնվում էր Շուշիի հարևանությամբ: Գյուղի վրա հարձակումը սկսվեց հունիս 5-ին, գիշերվա ժամը 10-ին: Թուրքերը երեք կողմից աքցանի մեջ առան գյուղը և փակեցին այնտեղից դուրս գալու բոլոր ճանապարհները: Հրոսակները, մտնելով գյուղ, սոսկալի ոճրագործություն կատարեցին: 70 տուն ունեցող գյուղը մեկ օրվա ընթացքում վերածվեց մոխրակույտի, իսկ հարյուրավոր մարդիկ սրի քաշվեցին, որոնց մեծ մասը երեխաներ էին, կանայք ու ծերեր: Ըստ Ղարաբաղի դեպքերը քննող պառլամենտական հանձնաժողովի կազմած արձանագրության, Ղայբալիշենի կործանման ժամանակ մորթվել է 500 մարդ: Եկեղեցին քարուքանդ է արվել: Տների ավերակներում կիսախանձ դիակներ են: Գետինը ծածկված է երեխաների դիակներով: Ղայբալիշենի մոտ գտնվող մատուռում մորթվել էր 50 հայ[11]: Ըստ այլ աղբյուրների, գյուղի 700 բնակչից փրկվել էին 100-180 մարդ[12]: Այս սահմռկեցուցիչ իրողությունը հաստատող փաստերով է հագեցված դեպքերի ու իրադարձությունների ականատեսի այս վկայաբերումը. «Ղայբալուշենի տները վառվում էին մեկը մյուսի հետևից, և ծուխը թանձրացել էր լեռան լանջին: Պարզ էր, որ «բարի հարևանները» անցնում էին տնետուն ու մի առ մի վառում՝ գյուղի հետքը կորցնելու մտադրությամբ: Բայց երկինքը խղճաց, սկսվեց մի հորդ անձրև ու բոցավառվող տների կրակը հանգցրեց, որից հետո տիրեց մի սպանող, գերեզմանային լռություն»[13]:

Սուլթանովը Ղայբալիշենի ավերումը կազմակերպել էր բրիտանական զինվորական սպայակույտի համաձայնությամբ: Ըստ ականատեսների, այն պահին, երբ թուրք-քրդական զորքը հոշոտում էր խաղաղ բնակչությանը, բրիտանական ներկայացուցչության անդամները Սուլթանովի տան պատուհանից հրճվանքով դիտում էին այդ «տեսարանը»[14]:

Մուսավաթական ու քրդական բանդաները, նրանց հետ թաթարական խուժանը, նոր արյունահեղություններ կազմակերպեցին նաև քաղաքա-

[11] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թթ. 168-172:
[12] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 23, թ. 387, գ. 76, թ. 12:
[13] **Արամայիս,** 64:
[14] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 92:

մերձ Կրկժան, Փահլուր, Ջամիլու գյուղերում՝ կոտորելով հարյուրավոր մարդկանց: Հունիսյան կոտորածների ժամանակ Ղարաբաղում զոհվեց 600-620 մարդ[15]:

Հունիսի 7-ին թշնամին հարձակվեց Քարինտակ ու Դաղուշեն գյուղերի վրա և հանդիպելով բնակչության լուրջ դիմադրությանը, նահանջեց[16]: Մուսավաթական Ադրբեջանի կառավարող շրջաններում ու բրիտանական հրամանատարության սպայակույտում հունիսյան դեպքերը մեծ իրարանցում առաջ բերեցին:

Գեներալ նահանգապետ Սուլթանովը պաշտոնանկ արվեց, անգլիական հրամանատարությունը ևս հետ կանչեց իր ներկայացուցիչ Մոնկ Միզոնին[17]: Արցախյան եղեռնագործությունը խորապես ցնցեց Կովկասի ողջ հայությանը: Ամենուր տեղի ունեցան բողոքի միտինգներ: Այսպես, հունիսի 22-ին Թիֆլիսում կայացավ 30 հազարանոց միտինգ: Մասնակիցների թվում էին նաև թիֆլիսահայ մտավորականության աչքի ընկնող ներկայացուցիչներ Հովհ. Թումանյանը, Ալ. Սպենդիարյանը, Մելիք Հովսեփյանը և ուրիշներ: Միտինգի մասնակիցների անունից ընդունվեց դիմում՝ ուղղված դաշնակից երկրների կառավարություններին, որտեղ մասնավորապես պահանջվում էր դատի տալ կոտորածի հեղինակներին, Ղարաբաղից անհապաղ հեռացնել Ադրբեջանի կողմից նշանակված «իշխանությանը», որին չի ճանաչել և չի ճանաչում հայկական Ղարաբաղը, և կցել մայր երկրին՝ Հայաստանին[18]:

Հունիսի 16-ին Երևանում կայացած միտինգի մասնակիցների Հայաստանի Հանրապետության կառավարությանը հասցեագրված դիմումում, մասնավորապես ասված է, որ Ադրբեջանի զորքերը, Սուլթանովի գլխավորությամբ ավերել են հայկական 6գյուղ, սպանել են 600 մարդ և սպառնում են շարունակել կոտորածը, արյան մեջ խեղդել Ղարաբաղը: Մենք համոզված ենք, որ սա շարունակությունն է էնվերների ու թալեաթների արյունոտ քաղաքականության: Բազմամարդ միտինգներ տեղի ունեցան նաև Ալեք-

[15] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 1, թ. 64, գ. 309, թթ. 139, 152:
[16] Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 557, թ. 26:
[17] «Արձագանք», 16 հունիսի 1919 թ.:
[18] «Ժողովուրդ», 27 հունիսի 1919 թ., «Հայաստանի աշխատավոր», 26 հունիսի 1919 թ.:

սանդրապոլում, Կարսում, Եկատերինոդարում և Անդրկովկասի հայաշատ վայրերում[19]:

Հունիսյան կոտորածների կապակցությամբ իր ձայնը հնչեցրեց նաև Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը: Թիֆլիսում գտնվող անգլիական գեներալ Կորիին ուղղված հեռագրում վեհափառ հայրապետը խնդրում էր պաշտպան կանգնել Ղարաբաղի հայությանը, որը գտնվում էր նոր ջարդերի վտանգի առաջ[20]: Հայաստանի Հանրապետության կառավարությունն Ադրբեջանի կառավարությանն ուղղված հեռագրով ամենավճռական կերպով բողոքեց Ղարաբաղի նկատմամբ գործադրված բռնի և արյունալի գործողությունների դեմ և վերստին հայտարարեց, որ ինքը չի ճանաչում Սուլթանովի գեներալ «նահանգապետությունը» հայկական Ղարաբաղի սահմաններում[21]:

Արխիվային փաստաթղթերի ու նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ղարաբաղի ջարդերը նախապես ծրագրվել ու կազմակերպվել էր Ադրբեջանի մուսավաթական կառավարության և նրա դրածո Սուլթանովի կողմից:

Անգլիական հրամանատարության կողմից Շուշի մեկնած գնդապետ Գլատերբերգը, ծանոթանալով կատարված արյունալի անցքերին, Շատելվորդին ներկայացրած զեկուցագրերում համարձակություն ունեցավ խոստովանել Ճշմարտությունը: Գլատերբերգը փաստերի հիման վրա ցույց է տալիս, որ ցանկության դեպքում Սուլթանովը կարող էր կանխել այդ ողբերգությունը: Վերջում նա պահանջում է կատարած հանցավոր քայլերի համար դատի տալ գեներալ նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովին[22]: Այդ կապակցությամբ Սուլթանովին գլխավոր հանցագործ է ճանաչում նաև տեղում հարցը ճշտելու նպատակով Ղարաբաղ մեկնած Ադրբեջանի պառլամենտականներից (Չուբարյան, Խոջայան, Ղարաբեկով, Ռուստամբեկով) կազմված հանձնաժողովը[23]:

---

[19] ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 45, ֆ. 4033, ց. 5, գ. 469, թթ. 1-2:
[20] «Ժողովուրդ», 22 հունիսի 1919 թ., «Ազգ», Բոստոն, 2 սեպտեմբերի 1919 թ.:
[21] «Արձագանք», 16 հունիսի 1919 թ.:
[22] «Պահակ», Բոստոն, 26 օգոստոսի 1919 թ., ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թթ. 168-171:
[23] «Պահակ», Բոստոն, 26 օգոստոսի 1919 թ.:

Այդ կապակցությամբ արտահայտելով իր տեսակետը, Ադրբեջանի կառավարության ղեկավար Ուսուբբեկովը ցինիկորեն ասել է. «Որքան էլ ցավալի լինեն Ղարաբաղի վերջին անցքերը, իմացած եղեք, որ դրանք վերջինը չեն լինելու, քանի դեռ Ղարաբաղի հայկական գավառները կշարունակեն իրենց դիմադրությունը Ադրբեջանի դեմ»[24]:

Այդ իրադարձությունները արցախահայությանը մեկընդմիշտ համոզեցին, որ պետք չէ հավատալ անգլիացիներին ու դաշնակից մյուս երկրներին և հույսեր կապել նրանց հետ: Այդ կապակցությամբ դիպուկ է ասված. «Անգլիացիներն ականատես էին…, բայց կարծես իրենց լռությամբ սրբագործում էին թուրքական տականքների արյունռուշտությունները…»[25]: Արցախահայությունը համոզվեց, որ իր հայրենիքի ու իր օջախի պաշտպանը միայն ինքն է ու իր թիկունքին կանգնած մայր Հայաստանը: Դրա ապացույցը հունիսյան դեպքերին անմիջապես հաջորդող օրերին Ղարաբաղի գավառներում տեղի ունեցող գյուղացիական համագումարներն էին և նրանց ընդունած որոշումները՝ երբեք չենթարկվել Ադրբեջանին[26]:

Այդ օրերին Հայաստանի կառավարությունը հնարավորություն չուներ ռազմական ուժով իրական օգնություն ցույց տալ Արցախին, ստիպված բավարարվեց նրան վերաբերող մի շարք որոշումներ ընդունելով: Այսպես, օրինակ, Հայաստանի Հանրապետության մինիստրների խորհուրդը 1919 թ. հունիսի 14-ի նիստում լսեց զինվորական մինիստրի պաշտոնակատար Դրաստամատ Կանայանի (Դրո) առաջարկությունը Ղարաբաղի զորամաս (բաղկացած 1 հետևակ գումարտակից, երկու լեռնային թնդանոթից և 54 ձիավոր հետախույզներից) կազմակերպելու համար 1500000 ռուբլի հատկացնելու մասին[27]: Մինչ այդ, մինիստրների խորհուրդը հունիսի 6-ի նիստով Ղարաբաղի կարիքների համար հատկացրել էր ևս 1 մլն ռուբլի: Մի շարք խանգարիչ հանգամանքների պատճառով այս և նման այլ որոշումները կյանքի չկոչվեցին, որը և, բացասաբար անդրադարձավ Արցախահայոց ինքնապաշտպանական համակարգի ամրապնդման վրա:

[24] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թթ. 168-170:
[25] Արամայիս, նշվ. աշխ., էջ 66:
[26] «Աշխատավոր», 19 հունիսի 1919 թ., «Արձագանք», 24 հունիսի 1919 թ.:
[27] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 27, մաս առաջին, թ. 134:

Ամփոփելով կարելի է ասել, որ Շուշին փաստորեն թեև գրավվել էր Սուլթանովի կողմից, սակայն այս ոճրագործությամբ նա ոչինչ չշահեց՝ դեռ կանգուն էին գավառները, ուր հայությունը միակամ էր՝ երբեք անձնատուր չլինել թշնամուն:

1920 թ. գարնան սկզբին Ադրբեջանը ձեռնամուխ եղավ ուժային մեթոդով Ղարաբաղի հարցի «լուծմանը» և այդ նպատակի համար ոչ միայն զինվորական հիմնական ուժեր, այլև «կամավորների» անվան տակ ահագին թվով զինված հրոսակախմբեր կենտրոնացրեց Ղարաբաղի գավառում: Ստույգ տվյալներով 1920 թ. գարնանը Ղարաբաղում կենտրոնացված էր ավելի քան 10 հազար զինվոր: Շտապ կերպով կազմակերպվեց քրդական մի դիվիզիա: Շուշի ժամանեց Նուրի փաշան 10 թուրք սպաների ուղեկցությամբ[28]: Մարտի 11-ին և 12-ին Բաքվից Ջեբրայիլի վրայով Ղարաբաղ և Զանգեզուր ուղարկվեց 90 վագոն՝ բեռնված զենքով ու զինամթերքով[29]: Եվլախ կայարանը լցված էր բեռնատար ավտոմեքենաներով, զենքի տարբեր տեսակներով ու ռազմամթերքով[30]:

Ամրացվեցին Շուշին և Խանքենդ ավանը: Մուսավաթական զորամասերը գրավեցին Ասկերանի անցուղին և դրանով ապահովեցին Ադրբեջանի կապը Շուշիի հետ[31]:

Ամրանալով Ղարաբաղի ռազմավարական նշանակություն ունեցող կետերում՝ Ադրբեջանը փորձեց զինաթափել ժողովրդին: Այդպիսի փորձեր արվեցին նաև Զանգեզուրի սահմաններում և Ջեբրայիլի շրջանում: Ադրբեջանի գործակալները Լեռնային Ղարաբաղում ժողովներ էին գումարում, զենք բաժանում մուսուլման բնակչությանն ու գրգռիչ ճառեր արտասանում հայերի դեմ: Այդ ամենը խոսում են այն մասին, որ Ղարաբաղի դեմ ուղղված Ադրբեջանի դավերը մասնակի բնույթ չունեին: Ղարաբաղը և Զանգեզուրը գործ ունեին լայնամասշտաբ պատերազմական գործողությունների հետ:

---

[28] «Ժողովուրդ», 26 մարտի 1920 թ.:
[29] «Нагорный Карабах в 1918-1923», с. 431.
[30] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թթ. 51-52:
[31] **Աբրահամյան Հ.,** 1991, 34:

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունն իր բնօրրան երկիրը թշնամուց պաշտպանելու, և նախնյաց երկրում ապրելու իր օրինական իրավունքը վերահաստատելու համար հարկադրված էր անհավասար կռվի ելնել թուրք-թաթարական կանոնավոր բանակների և բազմահազար հրոսակների դեմ, երբ սրանք Ադրբեջանի կենտրոնական իշխանության հրամանով «Ղարաբաղ-Զանգեզուրի հարցը մեջտեղից վերացնելու» նպատակով ուզում էին զինաթափ անել և արյան բաղնիք սարքել այդ գավառներում: Այլ խոսքով՝ ստեղծված կացությունը թելադրեց արցախահայությանը դիմելու ինքնապաշտպանության: Ինքնապաշտպանության գործի կազմակերպումը ղեկավարում էին արցախցի գործիչները: 1920 թ. հունվարին Երևանից Զանգեզուրի վրայով Ղարաբաղ ժամանեցին Արսեն Միքայելյանը, Ասատուր Ավետիսյանը, Արսեն Հովհաննիսյանը (Արսո), Դալի Ղազարը, կապիտան Մարտիրոսյանցը, գնդապետ Մեսյանը և մի քանի այլ սպաներ: Նրանք Վարանդայի Սարուշեն գյուղում հիմնեցին զինվորական շտաբ, որի պետ հաստատվեց Արսեն Միքայելյանը: Նրա մերձավոր զինակիցները դարձան Արտեմ Թումանյանը, Անուշավան Ավետիսյանը, Խաչատուր Մելքումյանը և ուրիշներ: Գավառում նոր կազմավորված զորամասերի համար նշանակվեցին ռազմական պետեր: Կապիտան Մարտիրոսյանցը նշանակվեց Ջիվանշիրի զորամասի հրամանատար, գնդապետ Մեսյանը՝ Խաչենի, Դալի Ղազարը՝ Վարանդայի, Հովակիմ Ստեփանյանը՝ Դիզակի[32]: Զինվորական հրամանատարները վերոհիշյալ շրջաններում կազմակերպեցին նոր զորամասեր, ծառայության վերցրեցին նախկին սպաներին և սկսեցին լրջորեն նախապատրաստվել ինքնապաշտպանության:

Ադրբեջանի կենտրոնական իշխանության հրահանգով Սուլթանովը 1920 թ. մարտի 20-ին վերջնագիր ներկայացրեց Ղարաբաղի հայ ազգաբնակչությանը, ըստ որի հատուկ նշանակված տեղերում, երեք օրվա ընթացքում, նրանք պիտի կամավոր հանձնեին իրենց զենքերը[33]: Ղարաբաղի բնակչությունը համարելով այդ վերջնագիրը օգոստոսյան ժամանակավոր համաձայնագրի ակնհայտ խախտում և պատերազմի նախանշան, որին պիտի անխուսափելիորեն հաջորդեին բռնությունները, վճռականորեն

[32] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թթ. 21-24:
[33] «Հառաջ», 20 ապրիլի 1920 թ.:

մերժեց այն: Մարտի 20-ին Սուլթանովի կարգադրությամբ Ղարաբաղում կենտրոնացած թուրք-թաթարական մեծաթիվ զորքերը սկսեցին բռնությամբ զինաթափել բնակչությանը: Ղարաբաղի գեներալ նահանգապետը Շուշի քաղաքի մահմեդական բնակիչներին հրահանգում է պատրաստ լինել և սպասել իր ազդանշանին՝ քաղաքի հայկական մասը հիմնահատակ կործանելու համար: Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի դեմ Ադրբեջանի հարձակումը սկսվեց 1920թ. մարտի 22-ին:

Այդ օրը Ադրբեջանի սահմանի ամբողջ երկայնքով՝ Գանձակից մինչև Զանգեզուր, ծավալվեցին մարտական գործողություններ: Ասկերանի (հրամանատար՝ Ղազար), Խանքենդի (հրամանատար՝ Զ. Մեսյան), Դիզակի (հրամանատարներ՝ Հովակ Ստեփանյան և Ալեքսան Դայի) կենաց ու մահու կռիվ էին մղում մի քանի անգամ թվաքանակով գերազանցող հակառակորդի դեմ: Թշնամու անցած ճանապարհին հազարավոր մարդիկ են կոտորվում, կանայք ու աղջիկներ անարգվում, ավերվում են ամբողջ գյուղեր: Ադրբեջանցի զինվորը 1920 թ. ապրիլի 8-ին մորը ուղարկած նամակում գրում է. «Ադդամից դուրս եկանք և մինչև Շուշի-բերդը գրավեցինք, ինչքան հայի գյուղեր կային՝ այրեցինք ու իրենց էլ կոտորեցինք, կանանց էլ բանտարկեցինք, որոնց շատ նեղություններ էինք տալիս»[34]:

Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների կիզակետը դարձավ Շուշու հայ ազգաբնակչության սպանդը: Այդ օրերին արցախահայության դահիճ Սուլթանովի ղեկավարությամբ մուսավաթական բանակը և մահմեդական խուժանը Շուշիում կատարեցին սոսկալի ոճրագործություն՝ կրակի ու թնդանոթի բերան տալով Շուշու հայ բնակչության մեծ մասին: Թաթարները պատրաստվում էին մեծ հանդիսավորությամբ նշել 1920 թ. Նովրուզ բայրամը՝ Ամանորը: Տոնակատարությանը մասնակցելու անվան տակ զորքը բերվեց Շուշի: Շուշի եկան նաև Ադդամի թուրք բեկերը[35], ինչպես նաև Ղարաբաղի տարբեր շրջաններից տասնյակ հարյուրավոր մուսուլմաններ:

Ի թիվս Ղարաբաղի մյուս շրջանների, Շուշու հայությանը ևս կարգադրված էր մինչև մարտի 22-ը հոժարակամ զենքերը հանձնել: Ժամկետը

[34] **Ահրահամյան Հ.,** 37:
[35] ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 14, թթ. 84-85:

լրանալուց հետո, մարտի 22-ի առավոտյան, Սուլթանովի հրամանով զինվորական պահակախմբերը սկսում են շրջել քաղաքի հայկական թաղամասը և խուզարկել բնակարանները: Այդպիսի մի պահակախումբ, սպայի գլխավորությամբ, ներս է խուժում մի հայ ընտանիք և պահանջում հանձնել զենքերը: Տաքարյուն հայ երիտասարդի ներկայությամբ թուրք սպան քստմնելի առաջարկություն է անում երիտասարդի գեղեցիկ հարսին: Երիտասարդը հրազենով սպանում է թուրք սպային: Ասկյարները նույն բախտին են արժանացնում երիտասարդին, նրա հարսին, մորը, քրոջը և գոռում-գոչյունով դուրս են թափվում, թաթար զինվորներին օգնության կանչում, թե՝ հայերը կոտորում են թուրքերին: Այս դեպքը Սուլթանովը միտումնավոր վերագրում է նրան, թե իբր քաղաք է թափանցել հայկական մի ջոկատ և փորձել է զինաթափել ասկյարներին: Գազազած նահանգապետը կարգադրում է հիմնահատակ կործանել Շուշիի հայկական թաղամասը (7 հազար տուն): Սկսվեց Շուշու հայության նոր սպանդը: Թաթար զինվորները և մահմեդական մոլեռանդ խուժանը խուժում են քաղաքի հայկական թաղամաս, հրդեհում բազմաթիվ բնակելի տներ ու հասարակական շինություններ, կոտորում անզեն բնակչությանը: Ըստ ականատեսի հաղորդման, «Ամենուրեք կրակի բոցեր էին բարձրանում: Երեկոյան դեմ քաղաքի տեսարանը սոսկալի էր: Ամեն կողմից լսվում էին լացի ու աղմուկի ձայներ»[36]:

Մուսուլմանական զորքը և բնակչությունը մի ամբողջ օր՝ մարտի 23-ին, արյան խրախճանք են կատարում քաղաքում: Հայ բնակչության մեծ մասը սրի է քաշվում՝ սպանվում են հազարավոր տղամարդիկ, կանայք, ծերեր և երեխաներ: Շուշիում զոհվածների թիվը հասնում էր մոտ 8 հազարի[37]: Այդ օրերին Շուշիում զոհվեցին Ալեքսանդր Ծատուրյանը (Ռուբեն), Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը, բժիշկ Յարամիշյանը, բանաստեղծներ Մ. Ջանումյանը, Փիրջանյանը, ուսուցիչներ Թավրիզյանը, Տեր-Գաբրիելյանը, գիտության ու մշակույթի այլ ներկայացուցիչներ[38]:

[36] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 67:
[37] Նույն տեղում, գ. 427, առաջին մաս, թ. 179, երկրորդ մաս, թ. 245, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 145:
[38] Աբրահամյան Հ., 37:

Մահից փրկված Շուշիի հայության բեկորները, թվով 5-6 հազար մարդ, մազապուրծ փախան Վարանդա և Դիզակ[39]:

Կոտորածին մասնակցած զինվորների ու կամավորների նամակները լրացուցիչ լույս են սփռում Ղարաբաղում տեղի ունեցած դեպքերի ու մահմեդականների ձեռքով կատարված ոճիրների վրա: Բաքվում գտնվող որդուն հայրը (գրողն ըստ երևույթին Շուշեցի թուրք է) գրում է. «Տեսածդ Էրմենիստանը այրված է, հինգ կամ տասը տուն պահեցին: Հազարից ավելի հայեր գերի բռնվեցին, տղամարդկանց բոլորին կոտորեցին, խալիֆին (եպիսկոպոսին. խոսքը Վահան եպիսկոպոսի մասին է – Հ.Հ.), բոլոր մեծամեծ մարդկանց: Նշանավոր հայերին սպանելուց հետո գլուխները կտրած բազարներում պտտեցնել էին տալիս»[40]: Քաղաքի հայկական թաղամասում թուրքերի կատարած թալանի ու կողոպուտի մասին նույն նամակագիրը նշում է, որ «այս կողմերում այլևս ոչ մի հայ չեք գտնի, և ոչ էլ այնպիսի թուրքի կարող եք հանդիպել, որ հարյուր հազարից պակաս թալան բերած լինի: Այնպիսի մարդ կա, որ մեկ միլիոնից ավելի ապրանք է բերել…: 10-15 տուն է մնացել, կառավարությունը չուզեց այրել, որպեսզի ասկյարները բնակվեն: Քաղաքը ավերակ դարձավ»[41]: Մեկ այլ նամակագիր վշտացած էր, որ հայերի կոտորածով և տների ու խանութների թալանով իրենք մի միլիոնի չափ կորուստ ունեն, որովհետև նրանց տված ապառիկները չեն կարող հավաքել[42]:

Այսպիսով, մարտ-ապրիլ ամիսներին մուսավաթական բանակը և մուսուլմանական մոլեռանդ խուժանը, թուրք սպաների հրամանատարությամբ, անհամար կոտորածներ ու ավերածություններ պատճառեցին Արցախ աշխարհին: Ավերվեցին ավելի քան երեք տասնյակ գյուղեր ու շեներ: Սպանվեցին հազարավոր խաղաղ բնակիչներ: Ղարաբաղի ամբողջ տարածքում սպանվածների թիվը հասնում էր 10 հազարի[43]: Ըստ Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի կազմած վիճակագրության, կործանված գյուղերից ու շեներից մոտ 20 հազար չափահաս և ավելի քան 4 հազար անչափա-

[39] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 145, «Հառաջ», 20 ապրիլի 1920 թ.:
[40] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թթ. 163-164:
[41] Նույն տեղում:
[42] Նույն տեղում, թ. 113:
[43] Նույն տեղում, թթ. 163-164:

հաս մարդ ապաստան գտան Վարանդայի, Դիզակի և մասամբ Զանգեզուրի գյուղերում[44]:

1920 թ. ապրիլի 4-ին Հայ Հեղափոխական Դաշնակցության Երևանի խորհուրդը, լսելով Ս. Վրացյանի զեկուցումը Ղարաբաղի և Զանգեզուրի վերջին դեպքերի մասին, որոշեց բոլոր միջոցներով աջակցել կառավարությանը՝ ապահովելու համար Զանգեզուրի և Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը[45]: Ապրիլի 7-ին Երևանում ապրող ղարաբաղցիների հայրենակցական միության նախաձեռնությամբ հրավիրվեց ընդհանուր ժողով: Միության վարչության նախագահ Դավիթ Անանունը ժողովականներին տեղեկացրեց Ղարաբաղի արյունալի անցքերի մասին: Ժողովականները կոչով դիմեցին հարևան ժողովուրդների դեմոկրատական կազմակերպություններին, որ նրանք գործի դնեն բոլոր միջոցները՝ սանձելու Ադրբեջանի կառավարությանը, վերջ տալու արցախահայության դեմ ուղղված բարբարոսություններին[46]:

Հայ ժողովրդի արցախյան հատվածի նկատմամբ Ադրբեջանի կազմակերպած վանդալիզմի դեմ բողոքի ձայն բարձրացրեց Հայաստանի կառավարությունը և վճռեց անհապաղ օգնության հասնել: Կառավարությունը դաշնակիցների ուշադրությունն է հրավիրում հայության նկատմամբ Լեռնային Ղարաբաղում սաստկացող կոտորածների վրա և կոչ է անում միացյալ ճնշում գործադրելու Ադրբեջանի վրա՝ այդ արյունահեղություններին վերջ տալու համար:

Ղարաբաղը գրավելու նպատակով Ադրբեջանի կառավարության և նրա դրածո Սուլթանովի քաղաքականությունը արցախահայությանը ոտքի հանեց պայքարի, ինչը Ադրբեջանի կողմից ներկայացվեց որպես “ապստամբություն”: Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանը ապրիլի 15-ին, այսինքն՝ Ղարաբաղի հայտնի դեպքերից մի քանի օր անց, Ադրբեջանի արտգործնախարար Խան Խոյսկու հանդիպման ժամանակ խստորեն դատապարտում է Ադրբեջանին՝ Ղարաբաղի նկատմամբ ցուցաբերած ագրեսիվ քաղաքականության և

[44] Նույն տեղում, թ. 69, «Հառաջ», 12 մայիսի 1920 թ.:
[45] «Հառաջ», 11 ապրիլի 1920 թ.:
[46] «Հառաջ», 11 ապրիլի 1920 թ.:

հավակնությունների համար[47]: Մեկ այլ հանդիպման ժամանակ (ապրիլի 20-ին), նա Խան Խոյսկուն դատապարտում է, ասելով, որ Ադրբեջանի ղեկավարների և Սուլթանովի վարած քաղաքականությունը մի նպատակ ունի՝ բնիկ ժողովրդին արմատախիլ անել իր պատմական բնօրրանից[48]:

Ղարաբաղում ստեղծված մթնոլորտի և ժողովրդական ընդվզման մանրամասներն ավելի որոշակի արտահայտված են այն զեկուցման մեջ, որ վարչապետ Ալ. Խատիսյանը ընթերցել է պառլամենտի նիստում: «1918 թ. նոյեմբերին Զանգեզուրում պարտություն կրելուց հետո Ադրբեջանի կառավարությունը նորից փորձ արեց գրավել Ղարաբաղը՝ նպատակ ունենալով կատարված փաստի առաջ դնել թե՛ Հայաստանի կառավարությանը, և թե՛Փարիզի կոնֆերանսին,- ընդգծել է վարչապետն ու ավելացրել, որ մարտի 22-ը, որ ներկայացվում է Ղարաբաղի "ապստամբության" օր, ես հերքում եմ. Հայերի կողմից ապստամբություն չի եղել, այլ դա պատասխան է եղել Ադրբեջանի կանոնավոր զորքերի հարձակման: Ժողովուրդը զգալով մոտալուտ վտանգը, կանգնել է. և եթե դա ապստամբություն չէ նրանց կողմից, ուրեմն, ավելի ճիշտ, նորմալ վերաբերմունք է կոտորածի դեմ»[49]:

Բոլորովին հիմքից զուրկ են «ապստամբությունը» Հայաստանի կողմից կազմակերպած լինելու վերաբերյալ ադրբեջանական կողմի վայրահաչոցները:

Այսպիսով, Ադրբեջանի ղեկավարության բոլոր ջանքերը, կատարված բռնարարքների, գազանությունների ու հանցագործությունների իրականացնողների և անմիջական մասնակիցների բոլոր գործողությունները մի նպատակ ունեին՝ բնիկ ժողովրդին արմատախիլ անել իր պատմական բնօրրանից: Ադրբեջանն այդպես էլ չկարողացավ իր իշխանությունը տարածել Լեռնային Ղարաբաղի վրա: Արցախահայությունը զենքով դիմագրավեց իր անվտանգության վրա ծանրացած սպառնալիքին: Այս և հետագա մյուս կռիվներից ծնվեց Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը (1992 թ.):

[47] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թթ. 155-156:
[48] Նույն տեղում, ֆ. 278, ց. 1, գ. 14, թթ. 72-73:
[49] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թթ. 49-52:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Հ., – 1991, Արցախյան գոյամարտ, Ե., 1991:
«Ազգ», Բոստոն, 2 սեպտեմբերի 1919 թ.:
«Աշխատավոր», 19 հունիսի 1919 թ.:
Արամայիս, – 1993, Ղարաբաղի տագնապը, Ե., 1993:
«Արձագանք», 16 հունիսի 1919 թ.:
«Արձագանք», 24 հունիսի 1919 թ.:
«Ժողովուրդ», 22 հունիսի 1919 թ.:
«Ժողովուրդ», 27 հունիսի 1919 թ.:
«Ժողովուրդ», 26 մարտի 1920 թ.:
«Հայաստանի աշխատավոր», 26 հունիսի 1919 թ.:
«Հայրենիք», մայիս, 1926, Է, 51-52:
«Հառաջ», 12 մայիսի 1920 թ.:
«Հառաջ», 11 ապրիլի 1920 թ.:
«Պահակ», 14 հունիսի 1919 թ.:
«Պահակ», Բոստոն, 26 օգոստոսի 1919 թ.:
Нагорный Карабах в 1918-1923 гг., – 1992, «Сборник документов и материалов», Е., 1992.

ГАМЛЕТ АРУТЮНЯН
Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱ Պատմության ինստիտուտ

РЕЗНЯ АРМЯН ШУШИ
(июнь 1919 – март 1920)

РЕЗЮМЕ

«Наиболее тяжёлыми и полными драматических событий годами для Арцаха – «Армянского восточного края» были 1918–1920 гг. Именно в эти годы Нагорный Карабах стал «спорной территорией».

Объявленный генерал-губернатором Шуши, Зангезура, Джебраильского и Дживанширского районов Хосров Бек Султанов, ставший опорой и правой рукой командующего британскими войсками в Баку генерала Томсона, затем сменившего его полковника Шателворда, дипломатическим давлением, обманом, убеждением, шантажом и применением вооружённых сил хотел вырвать у арцахских армян согласие, стать поданными Азербайджана. Ответ арцахцев был неизменным и чётким: нет власти Азербайджана. Одновременно, высказываясь за добрососедские отношения с соседним тюркским народом.

Султанов намеревался первый и наиболее смертельный удар нанести центру освободительного движения Арцаха – городу Шуши. 2-ого июня он ввёл в Шуши курдскую банду, около 3000 человек, а также 1500 вооружённых татарских кочевников. 2-го и 3-го июня из армянского квартала все татары незаметно удалились в татарский квартал. 3-го июня турецкие воинские части перекрыли дорогу из Гориса в Шуши. После всесторонней подготовки 4-го июня, в 10 ч. утра по приказу Султанова начался артеллерийский обстрел армянского квартала Шуши. В этот день из 50 армян, отправившихся на работу в турецкий квартал вернулись семеро, а остальных курды зверски зарезали. Обстрел армянского квартала Шуши длился 16 часов. Мусаватистские солдаты и курдская банда вошли в армянский квартал города и произвели ужасные разрушения. В эти дни в турецкой части города было вырезано 40 армян. Также было разрушено село Гайбалишен, находившееся по соседству с Шуши. Нападение на село началось 5-ого июня в 10 ч. вечера. Разъярённые бандиты

войдя в село совершили ужасные преступления. Село с 70-ю домами за день было превращено в пепелище, а сотни людей были зарезаны. Большей частью это были женщины, дети и старики. Согласно заключению парламентской комиссии по изучению событий в Карабахе в Гайбалишене было вырезано 500 человек. Церковь была разрушена. На развалинах домов полуобугленные трупы. Земля была покрыта трупами детей. В часовне, недалеко от Гайбалишена было зарезано 50 армян. По другим источникам, из 700 жителей села спаслись 100–180.

Трагические события имевшие место в Нагорном Карабахе продолжались также и в следующем – 1920 г., апофеозом которого стала резня армянского населения Шуши.

Мусульманская армия и население в течение 23-го марта вырезали большую часть армянского населения: были убиты тысячи мужчин, женщин, стариков и детей. Число погибших в Шуши достигло 8000. В эти дни в Шуши погибли Александр Цатурян (Рубен), предстоятель Арцахской епархии епископ Ваан, врач Арамишян, поэты М. Джанумян, Пирджанян, учителя Тавризян, Тер-Габриелян, другие представители науки и культуры. Чудом спасшиеся от смерти армяне Шуши числом около 5000 – 6000 человек, спаслись бегством в Варанду и Дизак. Оставшихся в городе армян турки сгоняли в татарский квартал.

В марте и апреле мусаватистская армия и фанатичный мусульманский сброд, под руководством турецких офицеров произвели неисчислимые убийства и разрушения в Арцахском крае. Были разрушены более трёх тысяч сёл и деревень. Убиты тысячи мирных жителей. По всей территории Карабаха число убитых достигло 10000. Согласно статистике, составленной Армянским народным советом Карабаха, около 20000 совершеннолетних и более 4000 несовершеннолетних лиц нашли убежище в сёлах Варанды, Дизака и, частично – Зангезура.

HAMLET HARUTIUNYAN
Doctor of History
Institute of History, NAS RA

MASSACRES OF ARMENIANS IN SHUSHI (JUNE 1919 AND MARCH 1920)

SUMMARY

"On the side of the Armenian East" – In the long history of Artsakh the years 1918 - 1920 were the most disastrous. It was in those years that Nagorny Karabakh became the apple of discord.

In Baku, Khosrov Bek Sultanov, supporting the British Army Commander General Thomson, and then his successor colonel Shatelword, was proclaimed Governor General of the regions of Shushi, Zangezur, Jebrail and Jivanshir by Azerbaijan Government as of 15th January 1919. By applying diplomatic pressure, cheating, convincing, threatening and using military force, he tried to extort consent from the Armenians of Artsakh to become subjects of Azerbaijan. The response by the Artsakh population to Azerbaijani administration was unambiguously negative, with a perspective to maintain peaceful and friendly relations with the neighboring Turkish people. However, Azerbaijan continued to do its best to threaten the Armenians in the region.

On June 2nd Sultanov brought a Kurdish three thousand men as well as 1500 armed Tartar nomads to the Turkish quarter of the city. On June 2nd and 3rd Tartars moved from the Armenian quarter of Shushi to the Tartar quarter. On June 3rd Turkish military units closed the causeway from Shushi to Goris. After some preliminary operations, early in the morning of June 4th, by order of Sultanov an artillery attack on the Shushi Armenian quarter began. During that day nearly fifty Armenians who used to work in the Turkish quarter, were killed and only 7 survived.

The attack on the Armenian quarter of Shushi lasted sixteen hours. The Musavat soldiers and Kurdish mob entered the city's Armenian quarter inflicting terrible devastations there. In those days 40 Armenians lost their lives in the Turkish part of

the city. Sultanov's mobsters were at their highest when wiping out the village of Ghaibalishen. Ghaibalishen was located in the neighborhood of Shushi. Assault on the village started on June 5, at 10 p.m. As a result, during one day the village including seventy households was ruined, while hundreds of people including children and women were murdered. According to the protocol by the Parliamentary Commission investigating the events of Karabakh, the annihilation of Ghaibalishen costed 500 lives. The local church was completely destroyed. The land was covered with bodies of killed children. Nearly fifty Armenians were murdered in the chapel near Ghaibalishen.

The massacres continued in Nagorny Karabakh in the next year too. The Muslim army committed a bloody revelry in the city on March 23rd. Thousands of people, women, children and old people were slaughtered. According to some reports, the number of casualties in Shushi reached 8000. Alexander Tsaturian (Ruben), the primate of the Diocese of Artsakh Bishop Vahan, Dr. Haramishian, poets M. Janumian, Pirjanian, teachers Tavriyian, Ter-Gabrielian and many other representatives of culture and science were killed in Shushi during those days.

The rest of the Shushi Armenian population, counting about 5000–6000 thousand people, could escape and found refuge in Varanda and Dizak. Those who stayed in the city were driven to the Tartar quarter and throuwn into jail. Thus, during March and April the Musavat army made serious destructions in Artsakh. Many villages and settlements were devistated; thousands of citizens were murdered. According to some sources, the number of casualties in Karabakh reached 10000 people. More than 20000 people found refuge in Varanda, Dizak and the villages of Zangezur.